

Հայաստանում իրականացվող ծրագրեր

ՊԳԿ-ն ակտիվ գործունեություն է ծավալում Հայաստանում և աշխատում է մի շարք տեխնիկական հարցերի շուրջ՝ օգտագործելով տարբեր ֆինանսավորման մեխանիզմներ:

ՊԳԿ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրեր

- **Տեխնիկական աջակցություն խաղողի ֆիլոքսերադիմացկուն հավաստագրված տնկանյութի արտադրությանը**

Ծրագրի սպասվող արդյունքներ՝ Երկրում խաղողի արտադրության կայուն զարգացման համար ապահովել տեխնիկական աջակցություն՝ ուղղված խաղողի ֆիլոքսերայի նկատմամբ դիմացկուն տնկանյութի արտադրությանը, ինչպես նաև քաղաքականություն մշակելու համար ցուցաբերել աջակցություն՝ խաղողի տնկանյութի սերտիֆիկացման նոր համակարգի զարգացմանը: Մշակել օրենսդրական փաստաթուղթ՝ խաղողի տնկանյութի արտադրության համար անհրաժեշտ հավաստագրման ազգային համակարգի հիմնման համար և ներկայացնել առաջարկություններ՝ բույսերի պաշտպանությանն առնչվող ներկա օրենսդրության բարելավման ուղղությամբ:

- Ֆիլոքսերայի և այլ վնասակար օրգանիզմների դեմ պայքարի համար բուսասանիտարիայի ծառայության մասնագետների կարողությունների ամրապնդում:
- Աջակցություն Կառավարությանը՝ ֆիլոքսերադիմացկուն տնկանյութի արտադրության նպատակով տնկարանի ստեղծմանը:
- Ին-վիտրո (in-vitro) եղանակով խաղողի տնկանյութի արտադրության նպատակով պետական լաբորատորիայի կարողությունների ամրապնդում/ուժեղացում:

- **Կաթնամթերքի մատակարարման և վերամշակման գործընթացների բարելավում Հայաստանի կաթնամթերքի ոլորտում**

Ծրագրի նպատակն է աջակցել Հայաստանում կաթնամթերքի արժեքային շղթայի զարգացմանը, ամբողջությամբ վերլուծելով կաթի արտադրությանը նպաստող կերային ռեսուրսները և ուսումնասիրելով տարբեր տեսակի կաթնամթերքի պահանջարկը մշակել ռազմավարություն կաթնամթերքի արժեքային շղթայի կերային արտադրության և վերամշակման ոլորտների բարելավման նպատակով:

- **Արևելյան Եվրոպայում երկակի նշանակության կենդանիների ցեղատեսակների պահպանումն ու զարգացումը:** Ծրագրի նպատակն է ընտրված ցեղատեսակների զարգացման ծրագրերի հայեցակարգի և հեռանկարների մշակումը՝ հիմնվելով գենետիկական ռեսուրսների և դրանց արտադրության համակարգերի առկա վիճակի վրա:

Եվրոպական Միության և Ռուսաստանի Դաշնության կողմից ֆինանսավորվող ծրագրեր

- **ԵՀԳԳԶԾ/ENPARD շրջանակներում իրականացվող Տեխնիկական օժանդակություն ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը ծրագիր:**
Ծրագրի հիմնական նպատակն է աջակցել Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ արդյունավետ և կայուն գյուղատնտեսություն ապահովելու գործում՝ նպաստելով գյուղական շրջաններում պայմանների բարելավմանը:
- **Կովկասի և Կենտրոնական Ասիայի ընտրված երկրներում պարենային ապահովությանը և սնուցմանն ուղղված կարողությունների հզորացում**
(տարածաշրջանային ծրագիր)
Ծրագրի սպասվող արդյունքներ՝ Քաղաքականության, օրենսդրության և ծրագրերի մշակման կարողությունների բարելավում՝ միտված ազգաբնակչության համար պարենային ապահովության և սնուցման բարձր մակարդակի ապահովմանը:
- **Հակամանրեային դիմադրողականության (AMR) նվազեցումը սննդամթերքի մեջ և գյուղատնտեսության ոլորտում:** (տարածաշրջանային ծրագիր)
Ծրագիրը նպատակաուղղված է թիրախային երկրներում տեխնիկական կարողությունների ամրապնդմանը: Ակնկալվում է, որ ծրագիրը կկարողանա բարելավել հասարակության և ազգային շահագրգիռ կողմերի իրազեկվածությունը հակամանրեային դիմադրողականության ռիսկերի վերաբերյալ՝ մարդկանց, սննդի, կենդանիների, բույսերի և շրջակա միջավայրի բնագավառում և երաշխավորել որպեսզի սննդամթերքի և գյուղատնտեսության ոլորտը ակտիվորեն ներգրավված լինեն հակամանրեային դիմադրողականության վերաբերյալ բազմակողմանի գործողությունների ազգային ծրագրերի մշակման գործում: